Արձանագրություն N 2

«ՀՀ ԱԳԿԿ-ԲՄԱՇՁԲ-19/01» ծածկագրով բաց մրցույթի ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի բացման նիստի

ք. Երևան 18 փետրվարի 2019թ. ժ. 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Օսիկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Բ. Նազարյան, Ա. Սողոմոնյան, Ժ. Մարգարյան, Ա. Տոնոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Լ. Մանուչարյան

Բաց մրցույթի ձևով գնման ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Անվանումը	Հասցե
1	«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ	ՀՀ, ք. Երևան, 35/2 Կոմիտասի պողոտա
2	ООО Рука Маппинг	Վրաստան, Թբիլիսի, Պեկինի փողոց 27

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Ընթացակարգի հրավերով սահմանված՝ ծրարների կազմման և ներկայացման պահանջներին. - համապատասխանում է «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ –ի ներկայացրած հայտը, իսկ ООО Рука Маппинг-ի կողմից ներկայացված հայտերը չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

Հրավերի 8.9 կետով սահմանված է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցները հայտում ներառվող՝ իրենց կողմից հաստատվող փաստաթղթերը հաստատում են էլեկտրոնային թվային ստորագրությամբ, իսկ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող մասնակիցները՝ այդ փաստաթղթերը ներկայացնում են հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

ООО Рука Маппинг-ը հայտ է ներկայացրել համատեղ գործունեության կարգով «Ենթակառուցվածքներ» ՍՊԸ-ի հետ, որը հանդիսանում է ՀՀ ռեզիդենտ: «Ենթակառուցվածքներ» ՍՊԸ-ն բոլոր փաստաթղթերը, այդ թվում նաև գնային առաջարկը չի հաստատել էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այլ ներկայացրել է հաստատված բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) տարբերակով:

Ելնելով վերոգրյալից՝ գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել համատեղ գործունեության կարգով հանդես եկած մասնակցի հայտը, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ ներկայացնել հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

3. Ընթացակարգի հրավերով սահմանված՝ բացված յուրաքանչյուր ծրարում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության և դրանց համապատասխանությունը ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին նախնական տվյալներով. -համապատասխանում է մասնակցի կողմից ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Մասնակիցների կողմից առաջարկված գները հետևյալն են.

	Չափաբաժնի անվանումը	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Առաջարկված գինը՝ առանց ԱԱՀ (ՀՀ դրամ)	Նախահաշվային արժեք (ներառյալ ԱԱՀ)
		ООО Рука Маппинг	«Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ	
1	2	3	4	5
1	ՀՀ քաղաքների երկրատեղեկատվական համակարգի (ետհ) միջավայրում քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքներ (1330 հա)	47655000	**54461190**	**65441300**
2	ՀՀ քաղաքների երկրատեղեկատվական համակարգի (ետհ) միջավայրում քարտեզագրական հիմքի ստեղծման աշխատանքներ (1400 հա)	50150000	**57528475**	**69157000**

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Ընդունել ի գիտություն, որ բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

6. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա առաջին տեղ է զբաղեցրել «Գեոդեզիա և քարտեզագրություն» ՊՈԱԿ-ը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

7. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

8. Գնումները համակարգողին՝ ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի համաձայն գնային առաջարկների բացման նիստի արձանագրությունը ներկայացնել ստորագրման:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

9. Հանձնաժողովը որոշեց ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների ամփոփելու նպատակով նիստ հրավիրել գնումները համակարգողի կողմից հայտերի գնահատման արձանագրությունները ներկայացնելու օրվան հաջորդող օրը ժ. 15:00-ին, կոմիտեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

10. Էլեկտրոնային եղանակով Lena_Najaryan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին, էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով karine_sargsyan@taxservice.am, gor_mkrtchyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը, հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկել առաջարկ՝ ներկայացնելու հրավերով սահմանված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի՝

Նախագահ՝ _____ Ա. Օսիկյան

Անդամներ՝ _____ Բ. Նազարյան

_____ Ա. Սողոմոնյան

_____ Ժ. Մարգարյան

_____ Ա. Տոնոյան

Քարտուղար՝ _____ Լ. Մանուչարյան